

Հաստատված է՝

ԵՊՀ ՈԻԳԸ գիտական խորհրդի

2014 թ. հոկտեմբերի 23-ի նիստում

ԵՊՀ ՈԻԳԸ նախագահ՝

Մ. Մալխասյան

ԵՊՀ ՈԻԳԸ քարտուղար՝

Տ. Ղանալանյան

ԵՊՀ ՈԻԳԸ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ԵՊՀ ՈԻԳԸ գիտաժողովների և աշխատաժողովների կազմակերպման ընթացակարգը:

2. ԵՊՀ ՈԻԳԸ կամ նրա ստորաբաժանման կողմից կազմակերպվող գիտաժողովները պետք է համապատասխանեն հետևյալ չափորոշիչներին.

- Գիտաժողովի անցկացման մասին որոշումը՝ ընտրված կազմկոմիտեի կազմով, պետք է ներկայացվի ԵՊՀ ՈԻԳԸ քարտուղարին միջոցառման նախատեսված օրվանից նվազագույնը 5 ամիս և երկու շաբաթ առաջ:
- Գիտաժողովի անցկացման մասին հայտարարության թվային տարբերակը պետք է նվազագույնը 5 ամիս առաջ տրամադրվի ՈԻԳԸ տեղեկատվական հանձնաժողովի ղեկավարին՝ ՈԻԳԸ կայքում տեղադրելու համար, ինչպես նաև տրամադրվի ՈԻԳԸ արտաքին կապերի հանձնաժողովի ղեկավարին՝ գործընկեր կառույցներին ուղարկելու համար:
- Գիտաժողովին մասնակցելու համար հայտերը՝ կից հեղինակի ակադեմիական կենսագրությամբ (բարձրագույն կրթության և հրատարակած աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությամբ), գիտղեկավարի կարծիք-երաշխավորագրով և թեզիսով (մինչև 300 բառ հիմնադրույթները՝ ներառյալ գիտական նորույթը), պետք է ներկայացվեն ՈԻԳԸ գիտաժողովից առնվազն 50 օր առաջ:
- Հայտերի ընդունումից հետո 10 օրվա ընթացքում կազմկոմիտեն պետք է պատասխանի բոլոր հայտատուներին հայտերի (չ)ընդունվելու մասին: Հայտերի ընտրմանը պետք է մասնակցեն գիտաժողովի կազմկոմիտեում ընդգրկված նվազագույնը երեք դասախոսներ (որոնցից երկուսը պետք է ունենան գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան):
- Գիտաժողովի անցկացումից նվազագույնը 20 օր առաջ ստորաբաժանման ղեկավարը ՈԻԳԸ աշխատակազմի ղեկավարին պետք է տեղեկացնի կազմակերպչական աշխատանքներում ակնկալվող աջակցության մասին:
- Գիտաժողովի անցկացումից նվազագույնը 20 օր առաջ ծրագիրը պետք է տպվի, թվային տարբերակը տրամադրվի ՈԻԳԸ տեղեկատվական հանձնաժողովի ղեկավարին՝ ՈԻԳԸ կայքում տեղադրելու համար, ինչպես նաև արտաքին կապերի հանձնաժողովի ղեկավարին՝ գործընկեր կառույցներին ուղարկելու համար:
- Բոլոր զեկուցողներին պետք է տրամադրվեն թղթապանակներ, գիտաժողովի ծրագիր, գրիչ և նոթատետր:

- Գիտաժողովի ընթացքում ցանկալի է ապահովել սուրճի ընդմիջում:
- Անհրաժեշտ է ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի պատշաճ ներկայացվածություն գիտաժողովին:
- Գիտաժողովի անցկացումից հետո պետք է սահմանվի մեկամսյա ժամկետ՝ հոդվածի վերջնական տարբերակը ուղարկելու համար: Հավաքված հոդվածները՝ կից հեղինակների ակադեմիական կենսագրություններով, գիտական ղեկավարների կարծիքներով, եռօրյա ժամկետում (գիտաժողովի ավարտից մեկ ամիս + 3 օր հետո) ստորաբաժանման ղեկավարը պետք է տրամադրի ՈԻԳԸ փոխնախագահին՝ աշխատանքները տպագրության գործընթացում ընդգրկելու համար:

3. ԵՊՀ ՈԻԳԸ կամ նրա ստորաբաժանման կողմից կազմակերպվող աշխատաժողովները պետք է համապատասխանեն հետևյալ չափորոշիչներին.

- Աշխատաժողովի անցկացման մասին որոշումը՝ ընտրված կազմկոմիտեի կազմով, պետք է ներկայացվի ԵՊՀ ՈԻԳԸ քարտուղարին նախատեսված օրվանից նվազագույնը 2 ամիս և երկու շաբաթ առաջ:
- Աշխատաժողովի անցկացման մասին հայտարարության թվային տարբերակը պետք է նվազագույնը 2 ամիս առաջ տրամադրվի ՈԻԳԸ տեղեկատվական հանձնաժողովի ղեկավարին՝ ՈԻԳԸ կայքում տեղադրելու համար, ինչպես նաև ՈԻԳԸ արտաքին կապերի հանձնաժողովի ղեկավարին՝ գործընկեր կառույցներին ուղարկելու համար:
- Աշխատաժողովին մասնակցելու համար հայտերը՝ հեղինակի ակադեմիական կենսագրությամբ, գիտղեկավարի կարծիքով և թեզիսով (մինչև 300 բառ, որտեղ պարտադիր նշվի գիտական նորույթը) պետք է ընդունվեն առնվազն 1 ամիս առաջ:
- Հայտերի ընդունումից հետո 10 օրվա ընթացքում կազմկոմիտեն պետք է պատասխանի բոլոր հայտատուներին նրանց հայտերի (չ)ընդունվելու մասին: Հայտերի ընտրմանը պետք է մասնակցի նվազագույնը մեկ դասախոս, որը պետք է ընդգրկվի աշխատաժողովի կազմկոմիտեում և նախագահի աշխատաժողովի նիստերը:
- Աշխատաժողովի անցկացումից նվազագույնը 17 օր առաջ ծրագիրը պետք է տպվի, թվային տարբերակը տրամադրվի ՈԻԳԸ տեղեկատվական հանձնաժողովին՝ ՈԻԳԸ կայքում տեղադրելու համար, ինչպես նաև ՈԻԳԸ արտաքին կապերի հանձնաժողովի ղեկավարին՝ գործընկեր կառույցներին ուղարկելու համար:
- Պետք է ապահովվի պրոֆեսորադասախոսական կազմի մի քանի ներկայացուցիչների մասնակցությունը, մասնավորապես՝ նիստը նախագահողը պետք է պարտադիր դասախոս լինի: